ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/41

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ
Բողոք բերող՝ «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Հովհաննիսյանի, Մ. Ղազարյանի
«Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնանշման հարցում, այգեգործական, գյուղատնտեսական և այլ նմանատիպ գործիքների և սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Մասնակից) կողմից 16.03.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի հայտը 1-ին, 4-րդ, 6-8-րդ, 12-րդ, 14-16-րդ, 20-րդ, 25-րդ, 28-31-րդ, 43-րդ, 45-րդ, 46-րդ, 50-րդ, 61-րդ, 67-րդ, 68-րդ, 70-րդ, 71-րդ, 73-րդ, 74-րդ, 78-րդ, 79-րդ, 86-րդ, 87-րդ, 92-րդ և 117-րդ չափաբաժինների մասով անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները,
- ընդունել որոշում՝ 1-ին, 4-րդ, 6-8-րդ, 12-րդ, 14-16-րդ, 20-րդ, 25-րդ, 28-31-րդ, 43-րդ, 45-րդ, 46-րդ, 50-րդ, 61-րդ, 67-րդ, 68-րդ, 70-րդ, 71-րդ, 73-րդ, 74-րդ, 78-րդ, 79-րդ, 86-րդ, 87-րդ, 92-րդ և 117-րդ չափաբաժինների մասով նոր գների նվազեցման միաժամանակյա բանակցություն հրավիրելու վերաբերյալ՝ ներգրավելով նաև «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 16.03.2020թ.-ին:

17.03.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/41 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

24.03.2020թ.-ին և 10.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 24.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.04.2020թ.-ին:

2. <u>«Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ն 16.03.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից վերջինիս կարիքների համար՝ այգեգործական, գյուղատնտեսական և այլ նմանատիպ

գորիքների և սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է <<ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև Ռաֆայել Գրիգորյան Ա/Ձ–ն՝ ներկայացնելով հայտ՝ 1,2, 4, 6, 7, 8, 12, 14, 15, 16, 20, 25, 28,29, 30, 31, 43, 45, 46, 50, 51, 61, 67, 68, 70, 71, 73, 74, 76, 78, 79, 85, 86, 87, 88, 92 և 117 չափաբաժիններով:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.03.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Ռաֆայել Գրիգորյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված ծրարում առկա փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանությունների հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես հայտ պարունակող ծրարի մեջ բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջված Հավելված 1.1-ը, ինչպես նաև Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկում 2-րդ և 51-րդ չափաբաժինների մասով հաշվարկը և տառերով, և թվերով սխալ է կատարված:

Գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել կասեցնել նիստը 1 աշխատանքային օրով և տրամադրել Ռաֆայել Գրիգորյան Ա/Ձ-ին շտկելու արձանագրված անհամապատաս-խանությունները, իսկ 2-րդ և 51-րդ չափաբաժինների մասով Ա/Ձ-ի հայտը մերժել:

Այնուհետև նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Ռաֆայել Գրիգորյան Ա/Ձ-ի կողմից 05.03.2020թ. ներկայացվել է արձանագրված թերությունները շկված տարբերակը՝ 76, 85 և 88 չափաբաժինների մասով շտկումներ չի կատարվել և արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝ Ռաֆայել Գրիգորյան Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընթացակարգը 14, 31, 46, 50 ,87 և 92 չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջը /վերը նված չափաբաժիններին մասնակցության հայտ էր ներկայացրել միայն Ռաֆայել Գրիգորյան Ա/Ձ-ն/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ Ռաֆայել Գրիգորյան Ա/Ձ–ն մասնակցության հայտ է ներկայացրել <<Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն>> ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ այգեգործական, գյուղատնտեսական և այլ նմանատիպ գործիքների և սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված <<ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, մասնավորապես՝ 1,2, 4, 6, 7, 8, 12, 14, 15, 16, 20, 25, 28,29, 30, 31, 43, 45, 46, 50, 51, 61, 67, 68, 70, 71, 73, 74, 76, 78, 79, 85, 86, 87, 88, 92 և 117 չափաբաժիններով:

Ա/Ձ–ի հայտը 2-րդ և 51-րդ չափաբաժինների մասով մերժվել է, քանի որ գնային առաջար-կում՝ հաշվարկը և տառերով և թվերով սխալ է կատարված, 76, 85 և 88-րդ չափաբաժինների մասով հայտը մերժվել է, քանի որ արձանագրված անհամապատասխանությունների շտկումները չի կատարվել, իսկ 14, 31, 46, 50 ,87 և 92 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվել է չկայացած, քանի որ նշված չափաբաժիններին մասնակցության հայտ էր ներկայացրել միայն Ռաֆայել Գրիգորյան Ա/Ձ-ն/:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը անհասկանալի պայմաններում՝ Ռաֆայել Գրիգորյան Ա/Ձ-ի հայտը մերժում է ոչ թե 76, 85 և 88-րդ չափաբաժինների մասով, որոնցով ըստ գնահատող հանձնաժողովի համապատասխան արձանագրության՝ շտկում չէր կատարվել (միայն 2 և 51 չափաբաժինները մերժվել էին գնային առաջարկում առկա սխալի պատճառով), այլ նաև ներկայացված 1, 4, 6, 7, 8, 12, 14, 15, 16, 20, 25, 28,29, 30, 31, 43, 45, 46, 50, 61, 67, 68, 70, 71, 73, 74, 78, 79, 86, 87, 92 և 117 չափաբաժինների մասով, որոնցում որևէ խնդիր չէր արձանագրվել և նշվածի մասով մասնակցին շտկման պահանջ չեր ներկայացվել: Ավելին, հայտը ամբողջությամբ, բոլոր նշված չափաբաժինների մասով, գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար, և համապատասխանաբար ոչ մի խնդիր չունեցող չափաբաժինների մասով

ԱՁ-ն չի ծանուցվել նաև գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների նպատակով 10.03.2020թ. հրավիրված նիստին մասնակցելու համար:

Մինչդեռ՝ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Համաձայն՝ ընթացակարգի հրավերի 8.11 կետի՝ հայտերը բացվելուց և գնահատվելուց հետո հետո կազմվում է արձանագրություն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Հրավերի 8.12 կետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն հրավերի 1-ին մասի 3.5 կետում նշված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ.2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում: Հանձնաժողովի այն անդամները, որոնք հանձնաժողովի աշխատանքների մասնակցում են հայտերի բացման և գնահատման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրը.

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում «5» օրացուցային օր է:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8>> ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սույն ընթացակարգի շրջանակներում թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության և Հրավերի պահանջների մի շարք խախտումներ, մասնավորապես.

Այսպես, ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 03.03.2020թ., իսկ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունը՝ հրապարակվել է տեղեկագրում միայն 10 օր անց, այն է՝ 12.03.2020թ.:

Մինչդեռ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ կետի և Ընթացակարգի դրավերի 8.12 կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում, ինչը տվյալ դեպքում չի կատարվել:

Բացի այդ, հայտերի բացման արձանագրությունը թվագրված է 11.03.2020թ.-ին, մինչդեռ հայտերի բացումը, ինչպես արդեն նշել ենք, տեղի է ունեցել 03.03.2020թ.:

Վերոհիշյալի արդյունքում ստացվում է, որ հայտերի բացման նիստը սխալ ամսաթվով է հրավիրվել, քանի որ հայտերի բացումը, ըստ Ընթացակարգի հրավերի, պետք է տեղի ունենար 03.03.2020թ., սակայն հայտերի բացման նիստի արձանագրությունը (այդպիսի անվանում է կրում տվյալ արձանագրությունը) թվագրված է 11.03.2020թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել նաև "Գնումների մասին" ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Ընթացակարգի հրավերի 8.18-ի կետի պահանջների խախտում:

Մասնավորապես, Ընթացակարգի հրավերի 8.18-ը իմպերատիվ սահմանում է, որ հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

Ելնելով վերոհիշյալ պահանջներից՝ գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների դրույթներով՝ պետք է առնվազն մերժեր Ռաֆայել Գրիգորյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտերից թվով 5-ը, իսկ մնացած չափաբաժինների մասով, որոնցում որևէ խնդիր, անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ չէր արձանագրվել, Ա/Ձ-ին հրավիրեր գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների: Արդյունքում Ռաֆայել Գրիգորյան Ա/Ձ-ին ներկայացված բոլոր չափաբաժինների մասով մերժելով հայտը և չծանուցելով գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների՝ առնվազն գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով վերոշարադրված նորմերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի հայտը 1-ին, 4-րդ, 6-8-րդ, 12-րդ, 14-16-րդ, 20-րդ, 25-րդ, 28-31-րդ, 43-րդ, 45-րդ, 46-րդ, 50-րդ, 61-րդ, 67-րդ, 68-րդ, 70-րդ, 71-րդ, 73-րդ, 74-րդ, 78-րդ, 79-րդ, 86-րդ, 87-րդ, 92-րդ և 117-րդ չափաբաժինների մասով անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները,
- ընդունել որոշում՝ 1-ին, 4-րդ, 6-8-րդ, 12-րդ, 14-16-րդ, 20-րդ, 25-րդ, 28-31-րդ, 43-րդ, 45-րդ, 46-րդ, 50-րդ, 61-րդ, 67-րդ, 68-րդ, 70-րդ, 71-րդ, 73-րդ, 74-րդ, 78-րդ, 79-րդ, 86-րդ, 87-րդ, 92-րդ և 117-րդ չափաբաժինների մասով նոր գների նվազեցման միաժամանակյա բանակցություն հրավիրելու վերաբերյալ՝ ներգրավելով նաև «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ին:

3. <u>«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.03.2020թ.-ի գրությամբ դիմել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի կողմից 16.03.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին՝ ներկայացնելով նաև գրավոր դիրքորոշում:

18.03.2020թ.-ին թիվ 7231.20 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով «Ռաֆայել Գրիգորյան» ԱՁ-ի կողմից 16.03.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/41 ծածկագրով բողոքի պահանջները, հայտնում ենք հետևյալը.

2020թ.-ի մարտի 3-ին, ՀՀ, ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3 հասցեում գտնվող «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի շենքում ժամը 11:00-ին տեղի է ունեցել այգեգործական, գյուղատնտեսական և այլ նմանատիպ գործիքների և սարքավորումների ձեռքբերման ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստը: «Ռաֆայել Գրիգորյան» ԱՁ-ի (Հասցե՝ ՀՀ, ք. Եղեգնաձոր, Աթաբեկյան փ. Տուն 2, հեռ. +37477274256, էլ. հասցե՝ avetyanlev@gmail.com) կողմից 03.03.2020թ.-ին ժամը 10:35-ին ներկայացված ծրարում առկա փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ հայտ պարունակող ծրարի մեջ բացակայում էր սույն ընթացակարգի հրավերով պահանջված Հավելված 1.1-ը, ինչպես նաև Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկում 2-րդ և 51-րդ չափաբաժինների մասով հաշվարկը և՝ տառերով և՝ թվերով սխալ էր կատարված:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել Ռաֆայել Գրիգորյան ԱՁ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Հավելված 1.1-ի մասով արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները, իսկ 2-րդ և 51-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները գնահատել անբավարար և մերժել հայտը տվյալ չափաբաժինների մասով՝ Կարգի 32-րդ հոդվածի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Ռաֆայել Գրիգորյան ԱՁ-ի կողմից 05.03.2020թ. ներկայացվել է արձանագրված թերությունների մասնակիորեն շտկված տարբերակը. 76-րդ, 85-րդ, 88-րդ չափաբաժինների մասով շտկումը չի կատարվել:

Գնահատող հանձնաժողովը որոշեց Ռաֆայել Գրիգորյան ԱՁ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Ռաֆայել Գրիգորյան» ԱՁ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, 06.03.2020թ. Հ/Հ Ելից/72/17.20 գրությամբ ուղարկել ենք ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Ռաֆայել Գրիգորյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

«Ռաֆայել Գրիգորյան» ԱՁ-ի կողմից 16.03.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/41 ծածկագրով բողոքի «Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները» բաժնում նշված է, որ.

Ընթացակարգը 14, 31, 46, 50, 87 և 92 չաւիաբաժինների մասով հայտարարվել է չկայացած, քանի որ նշված չաւիաբաժիններին մասնակցության հայտ էր ներկայացրել միայն «Ռաֆայել Գրիգորյան» ԱՁ-ն, մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիշյալ չափաբաժինները հայտարարել է չկայացած հիմք ընդունելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները, քանի որ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Ռաֆայել Գրիգորյան» ԱՁ-ի հայտը «անհասկանալի պայմաններում» մերժել է ոչ թե 76, 85 և 88-րդ չավլաբաժինների մասով, այլ նաև 1, 2, 4, 6-8, 12, 14-16, 20, 25, 28-31, 43, 45, 46, 50, 51, 61, 67, 68, 70, 71, 73, 74, 78, 79, 92, 117 չափարաժինների մասով: Մինչդեռ մերժելու հիմքերը ակնհայտ են. «Ռաֆայել Գրիգորյան» ԱՁ-ն Հավելված 1-ով հայտնել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հայտնել է, որ Հավելված 1.1-ով ներկայացնում է առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը, սակայն Հավելված 1.1-ը չի ներկայացվել: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընթացակարգի քարտուղարը ծանուցել է «Ռաֆայել Գրիգորյան» ԱՁ-ին շտկել անհամապատասխանությունը, սակայն այս անգամ էլ շտկումը ներկայացնելուց հետո պարզվել է, որ Հավելված 1.1-ը չի ներկայացվել ամբողջական տեսքով, ինչը հիմք է հանդիսացել օրենքով սահմանած կարգով մասնակցի հայտը մերժելու:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի բացման և գնահատման նիստի արձանագրությանը, տեղեկացնում եմ, որ բացումը տեղի է ունեցել ս.թ. մարտի 3-ին ժամը 11:00-ին, Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն հայտերի գնահատումը իրականացնելուց հետո բացման նիստը ամփոփվել է ս.թ. մարտի 11-ին և Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի

արձանագրությունը հրապարակվել է տեղեկագրում, ինչպես նաև ծանուցվել է Ընթացակարգի մասնակիցներին:

Միաժամանակ ներկայացնում ենք նաև Ընթացակարգի արձանագրությունը և Ընթացակարգի հետ կապված այլ անհրաժեշտ փաստաթղթեր:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/41 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից այգեգործական, գյուղատնտեսական և այլ նմանատիպ գործիքների և սարքավորումների ձեռքբերման նպատակով 25.02.2020թ.-ին հայտարարվել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-8-րդ, 12-րդ, 14-16-րդ, 20-րդ, 25-րդ, 28-31-րդ, 43-րդ, 45-րդ, 46-րդ, 50-րդ, 51-րդ, 61-րդ, 67-րդ, 68-րդ, 70-րդ, 71-րդ, 73-րդ, 74-րդ, 76-րդ, 78-րդ, 79-րդ, 85-րդ, 86-88-րդ, 92-րդ և 117-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.03.2020թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված ծրարում առկա փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ հայտ պարունակող ծրարների մեջ բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջված թիվ 1.1 հավելվածը, ինչպես նաև թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկում 2-րդ և 51-րդ չափաբաժինների մասով հաշվարկը և տառերով և տվերով սխալ է կատարված:

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է՝

- նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել թիվ 1.1 հավելվածի մասով արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները,

- «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի կողմից 2-րդ և 51-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկը գնահատել անբավարար և մերժել վերջինիս հայտը նշված չափաբաժինների մասով:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ Մասնակցի կողմից 05.03.2020թ.-ին ներկայացվել է արձանագրված թերությունների շտկված տարբերակը, իսկ 76-րդ, 85-րդ և 88-րդ չափաբաժինների մասով շտկումը չի կատարվել:

Վերոնշյալով պայմանավորված և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները՝ Հանձնաժողովը որոշել է «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, իսկ 14-րդ, 31-րդ, 46-րդ 50-րդ 87-րդ և 92-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով նույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

Պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumnr.am կայքում հրապարակվել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ, 13-րդ, 14-րդ, 19-րդ, 31-35-րդ, 40-րդ, 42-րդ, 46-րդ, 47-րդ, 49-51-րդ, 53-րդ, 56-60-րդ, 65-րդ, 72-րդ, 77-րդ, 80-րդ, 81-րդ, 83-րդ, 87-րդ, 92-րդ, 93-րդ, 106-116-րդ, 119-122-րդ, 124-րդ, 125-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի կողմից 16.03.2020թ.-ի ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 17-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի

գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում են ըստ առանձին չափաբաժինների:

Ընթացակարգի հրավերի 8.18-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով, ընդ որում գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումն իրականացվում են ըստ առանձին չափաբաժինների:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից այգեգործական, գյուղատնտեսական և այլ նմանատիպ գործիքների և սարքավորումների ձեռքբերման նպատակով 25.02.2020թ.-ին հայտարարված «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-8-րդ, 12-րդ, 14-16-րդ, 20-րդ, 25-րդ, 28-31-րդ, 43-րդ, 45-րդ, 46-րդ, 50-րդ, 51-րդ, 61-րդ, 67-րդ, 68-րդ, 70-րդ, 71-րդ, 73-րդ, 74-րդ, 76-րդ, 78-րդ, 79-րդ, 85-րդ, 86-88-րդ, 92-րդ և 117-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ն:

Հանձնաժողովի 11.03.2020թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված ծրարում առկա փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ հայտ պարունակող ծրարների մեջ բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջված թիվ 1.1 հավելվածը, ինչպես նաև թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկում 2-րդ և 51-րդ չափաբաժինների մասով հաշվարկը և տառերով և տվերով սխալ է կատարված:

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է՝

- նիստը կասեցնել մեկ աշծատանքային օրով և առաջարկել Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել թիվ 1.1 հավելվածի մասով արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները,

- «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի կողմից 2-րդ և 51-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկը գնահատել անբավարար և մերժել վերջինիս հայտը նշված չափաբաժինների մասով:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ Մասնակցի կողմից 05.03.2020թ.-ին ներկայացվել է արձանագրված թերությունների շտկված տարբերակը, իսկ 76-րդ, 85-րդ և 88-րդ չափաբաժինների մասով շտկումը չի կատարվել:

Վերոնշյալով պայմանավորված և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները՝ Հանձնաժողովը որոշել է «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, իսկ 14-րդ, 31-րդ, 46-րդ 50-րդ 87-րդ և 92-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով նույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

Պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumnr.am կայքում հրապարակվել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ, 13-րդ, 14-րդ, 19-րդ, 31-35-րդ, 40-րդ, 42-րդ, 46-րդ, 47-րդ, 49-51-րդ, 53-րդ, 56-60-րդ, 65-րդ, 72-րդ, 77-րդ, 80-րդ, 81-րդ, 83-րդ, 87-րդ, 92-րդ, 93-րդ, 106-116-րդ, 119-122-րդ, 124-րդ, 125-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ հայտ պարունակող ծրարների մեջ բացակայել է Ընթացակարգի հրավերով պահանջված թիվ 1.1 հավելվածը, ինչով պայմանավորված Մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը, սակայն վերջինիս կողմից ներկայացվել է արձանագրված թերությունների շտկված տարբերակը՝ բացառությամբ 76-րդ, 85-րդ և 88-րդ չափաբաժինների, ինչը ըստ Հանձնաժողովի հիմք է հանդիսացել «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի հայտը ամբողջությամբ անբավարար գնահատելու և մերժելու համար:

Նման պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնահատող հանձնաժողովը ամբողջությամբ մերժելով «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը՝ գործել է ոչ իրավաչափ, քանի որ Մասնակցի կողմից ներկայացված

հայտերի գնահատումն պետք է իրականացվեր ըստ առանձին չափաբաժինների, որի արդյունքում պետք է մերժվեր միայն այն չափաբաժինները (76-րդ, 85-րդ և 88-րդ), որոնք չէին շտկվել «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի կողմից, իսկ մնացած չափաբաժինների մասով հայտը պետք է գնահատվեր բավարար: Այսինքն, տվյալ պարագայում, թիվ 1.1 հավելվածով նախատեսված 76-րդ, 85-րդ և 88-րդ չափաբաժինների մասով շտկում չներկայացնելը չէր կարող հիմք հանդիսանալ ամբողջ հայտը մերժելու համար:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը կայացվել է Օրենքի 34-րդ հոդվածով, Կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետով և Հրավերի 8.18-րդ կետով սահմանված պահանջների խախտումներով՝ որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից չի ապահովվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի կողմից 16.03.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/41 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ի հայտը 1-ին, 4-րդ, 6-8-րդ, 12-րդ, 14-16-րդ, 20-րդ, 25-րդ, 28-31-րդ, 43-րդ, 45-րդ, 46-րդ, 50-րդ, 61-րդ, 67-րդ, 68-րդ, 70-րդ, 71-րդ, 73-րդ, 74-րդ, 78-րդ, 79-րդ, 86-րդ, 87-րդ, 92-րդ և 117-րդ չափաբաժինների մասով անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները,
- ընդունել որոշում՝ 1-ին, 4-րդ, 6-8-րդ, 12-րդ, 14-16-րդ, 20-րդ, 25-րդ, 28-31-րդ, 43-րդ, 45-րդ, 46-րդ, 50-րդ, 61-րդ, 67-րդ, 68-րդ, 70-րդ, 71-րդ, 73-րդ, 74-րդ, 78-րդ, 79-րդ, 86-րդ, 87-րդ, 92-րդ և 117-րդ չափաբաժինների մասով նոր գների նվազեցման

միաժամանակյա բանակցություն հրավիրելու վերաբերյալ՝ ներգրավելով նաև «Ռաֆայել Գրիգորյան» Ա/Ձ-ին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ